Խորացրեք Քահանայության երդման և ուխտի վերաբերյալ ձեր հասկացողությունը

Սրբագործվել Հոգու միջոցով՝ ի նորացումն մարմնի (տես հատված 33)

Խոսելով Երկնային Հոր խոստման մասին՝ Առաջին Նախագահության Նախագահ Հենրի Բ. Այրինգը բացատրել է.

Ես տեսել եմ այդ խոստումի կատարումը իմ և ուրիշների կյանքում: Իմ ընկերը ծառայում էր որպես միսիայի նախագահ: Նա պատմել է ինձ, որ իր ծառայության յուրաքանչյուր օրվա վերջում հազիվ էր կարողանում գիշերը բարձրանալ իր սենյակ՝ քնելու և մտածում էր, թե արդյոք ուժ կունենա ևս մեկ օր ծառայելու համար: Այնուհետև առավոտյան նա զգում էր, որ իր ուժն ու քաջությունը վերականգնվել են: Դուք դա տեսել եք տարեց մարգարեների կյանքում. նրանք կարծես նորացվում էին ամեն անգամ, երբ կանգնում էին վկայելու Տեր Հիսուս Քրիստոսի և վերականգնված ավետարանի մասին: Դա խոստում է նրանց համար, ովքեր հավատքով առաջ են գնում իրենց քահանայության ծառայության մեջ: (Հենրի Բ. Այրինգ, «Հավատքը և Քահանայության երդումը և ուխտը», *Լիահոնա*, մայիս 2008 թ., 62)

Հավատարիմ եղեք Ահարոնյան և Մելքիսեդեկյան քահանայությունները ստանալու մեջ (տես հատված 33)

«Այս երկու քահանայությունները ստանալու մեջ» հավատարիմ լինելը (Վարդապետություն և Ուխտեր 84.33) ենթադրում է զորություն և օրհնություններ ստանալը, որոնք գալիս են Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունների արարողությունները ստանալուց և դրա հետ կապված ուխտերը հավատարմորեն պահելուց: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ մարդը ստանում է քահանայության լրիվությունը՝ «պահելով բոլոր պատվիրանները և հնազանդվելով Տիրոջ տան բոլոր արարողություններին» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 419):

Տղամարդկանց համար սա նաև ներառում է քահանայության շնորհումը և կարգումը քահանայության պաշտոններում:

Մեծարենք մեր կոչումները (հատված 33)

Վարդապետություն և Ուխտեր 58.27–28, 107.99–100

Կոչումներ ստանալու և Տիրոջ փրկության աշխատանքին մասնակցելու հնարավորությունները

Տասներկու Առաքյալների Քվորումից նախագահ Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է.

Մեծարելով մեր կոչումները՝ մենք պետք է փնտրենք Հոգու ոգեշնչումը, որպեսզի լուծենք խնդիրներն այնպիսի եղանակներով, որոնք լավագույնս կօգնեն մարդկանց, որոնց ծառայում ենք: Մենք ունենք ուղեցույց ձեռնարկներ, և անհրաժեշտ է հետևել դրանց ուղղորդումներին: Սակայն այդ շրջանակի սահմաններում մեծ հնարավորություններ կան մտածելու, ստեղծագործելու և անձնական տաղանդներն օգտագործելու համար: Մեր կոչումները մեծարելու հրահանգը դրանք զարդարելու և բարդացնելու հրաման չէ: Նորարարություններ մտցնելը չի նշանակում պարտադիր բարդացնել. շատ հաճախ դա նշանակում է պարզեցնել: (Մ. Ռասսել Բալլարդ «Օ, եղեք իմաստուն», *Լիահոնա*, նոյ. 2006 թ., 19)

Այն ամենն, ինչ ունի Երկնային Հայրը (տես հատված 38)

Վարդապետություն և Ուխտեր 76.55–60, 81.6

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռոնալդ Ա. Ռասբանդը կիսվել է.

Այն ճշմարտության իմացությունը, որ մենք Երկնային Հայր ունենք, և որ Հիսուս Քրիստոսը Նրա Միածին Որդին է, նշանակում է, որ մենք ավելի հեռուն ենք տեսնում ուխտի ճանապարհին, այլ ոչ միայն պարզապես այն կետը, որտեղ գտնվում ենք այսօր: Դա նշանակում է, որ մենք երախտապարտ ենք, որ ժառանգորդն ենք այն ամենի, ինչ Հայրն ունի. Նրա անթիվ թագավորությունները կարող են լինել մերը: Փրկիչը խոստացել է. «Եվ եթե դու հավատարիմ լինես մինչև վերջ, դու կունենաս անմահության պսակը, և հավերժական կյանք ապարանքներում, որոնք ես պատրաստել եմ իմ Հոր տան մեջ»: (Ռոնալդ Ա. Ռասբանդ, «Նրա դուստրերի աստվածային ճակատագիրը» [BYU Women's Conference, ապր. 30, 2021 թ.], broadcasts.ChurchofJesusChrist.org)

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_302-1